Հավելված N 2
ՀՀ կառավարության 2022 թվականի
հուլիսի 21-ի N 1104 - Ն որոշման

Գ Ո Ր Ծ Ո Ւ Ն Ե Ո Ւ Թ Յ Ա Ն Կ Ա Ր Գ

ՊԵՍՏԻՑԻԴՆԵՐԻ ԵՎ ԱԳՐՈՔԻՄԻԿԱՏՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. Պեստիցիդների և ագրոքիմիկատների գրանցման հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Բուսասանիտարիայի մասին» օրենքով և այլ իրավական ակտերով:

2. Հանձնաժողովի գործունեության նպատակը բուսասանիտարիայի բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմնի՝ Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ լիազոր մարմին) կողմից Հայաստանի Հանրապետությունում գրանցված պեստիցիդների և ագրոքիմիկատների անվանացանկը հաստատելու համար լիազոր մարմնին պեստիցիդների և ագրոքիմիկատների գրանցման մասին եզրակացություն տալն է:

3. Հանձնաժողովի գործունեությունը կազմակերպվում է նիստերի միջոցով:

4. Հանձնաժողովի նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում է հանձնաժողովի անդամների թվի կեսից ավելին: Որոշումները կայացվում են բաց քվեարկությամբ՝ հանձնաժողովի նիստի մասնակիցների ձայների 2/3-ով:

5. Հանձնաժողովի նիստերը կարող են անցկացվել նաև հեռավար եղանակով:

6. Հանձնաժողովի նախագահն անհրաժեշտության դեպքում հանձնաժողովի աշխատանքներում կարող է ներգրավել փորձագետների, որոնք ուսումնասիրում են փորձերի ընթացքն ու արդյունքների մասին զեկուցում հանձնաժողովին:

7. Քննարկման արդյունքների և քվեարկության հիման վրա կազմվում է պեստիցիդների և ագրոքիմիկատների գրանցման մասին եզրակացությունը, որը ստորագրում են հանձնաժողովի նախագահը և քարտուղարը:

8. Հանձնաժողովի նախագահի տեղակալը նախագահի բացակայության ժամանակ փոխարինում է նրան:

9. Հանձնաժողովի քարտուղարը նախապատրաստում է հանձնաժողովի նիստերի անցկացումը, պեստիցիդների և ագրոքիմիկատների գրանցման համար ներկայացված փաստաթղթերը տրամադրում է հանձնաժողովի անդամներին, նրանցից ստանում փորձաքննության արդյունքները, որն ամփոփ ներկայացնում է նիստին՝ հանձնաժողովի քննարկմանը, կազմում արձանագրություններ: Հանձնաժողովի նիստի արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի նախագահը և քարտուղարը: Նիստի արձանագրության մեջ նշվում են օրակարգը, ելույթների հակիրճ նկարագրությունը, քվորումի և քվեարկության արդյունքների մասին տեղեկություններ:

10. Հանձնաժողովի գործունեությունը դադարում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

21.07.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ